Ընդհանուր և արտաքին կապերի բաժ.
№0043 09 JAN 2020 ժամ__
Կից ☐ Դեղի կարգավիճակ
...

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«08» հունվար 2020թ. No 10 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 30-րդ կետի, Կառավարության 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 728-Լ որոշումը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի N 0403170319 առ 25.12.2019թ. գրությունը և դեղի պարզեցված ընթացակարգով կատարված փորձագիտական եզրակացությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Պարզեցված ընթացակարգով գրանցել երաշխավորված թվով 5 դեղը՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Զ. Դարբինյանին՝ նախարարի հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ին:

3.«Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Լ.Մելիքյանին՝

1) Սույն հրամանը հրապարակել օրենքով սահմանված կարգով:

2) 3 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել դեղի գրանցման հավաստագրի ներկայացումը Առողջապահության նախարարությանը:

3)Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4. Առողջապահության նախարարության դեղորայքային քաղաքականության և բժշկական տեխնոլոգիաների վարչության պետ Վ. Գրիգորյանին՝

Ստաց. 09.01.20 ժ. 10⁰⁰ [signature]

1) 2 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել դեղի գրանցման հավաստագրի ներկայացումը նախարարի հաստատմանը և տրամադրել Փորձագիտական կենտրոնին:

5.Սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում ապահովել հավելվածում նշված դեղի գրանցման հավաստագրի տրամադրումը հայտատուին:

6.Դեղի գրանցման ժամկետի (5 տարի) հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

08.01.2020

X

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360

Հավելված
ՀՀ առողջապահության նախարարի
2020 թվականի հունվարի 08 - ի
N 10 – Ա հրամանի

**ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԴԵՂԵՐԻ ՑԱՆԿ**
**ՀԱՄԱՁԱՅՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ N 162-Ն ԱՌ 28.02.2019 ՈՐՈՇՄԱՆ**

| Հ/Հ | Առևտրային անվանում | Միջազգային չպատենտավորված (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումներ | Դեղաձև | Դեղաչափ և թողարկման ձև (փաթեթավորում) | Արտադրող ֆիրման | Երկիր | Գրանցման հավաստագրի իրավատեր | Երկիր | Բացթողման կարգ | Եզրակացության համար և ամսաթիվ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | ԿետոՖԼԵՔՍ | կետոպրոֆեն | լուծույթ ներարկման | 50մգ/մլ; (10) ամպուլներ 2մլ | Վետպրոմ ԱԴ, Օտեց Պայսիժ փ. 26, Ռադոմիր 2400 | Բուլղարիա | Դանսոն-ԲԳ Քո. ՍՊԸ, Օտեց Պայսիժ փ. 26, Ռադոմիր 2400 | Բուլղարիա | Դ | 19047 25.12.2019 |
| 2 | ԴիկլոՖԼԵՔՍ 5% դոնդող | դիկլոֆենակ (դիկլոֆենակ նատրիում) | դոնդող | 50մգ/գ; 50գ ալյումինե պարկուճ | Վետպրոմ ԱԴ, Օտեց Պայսիժ փ. 26, Ռադոմիր 2400 | Բուլղարիա | Դանսոն-ԲԳ Քո. ՍՊԸ, Օտեց Պայսիժ փ. 26, Ռադոմիր 2400 | Բուլղարիա | ԱԴ | 19048 25.12.2019 |
| 3. | Հեդեսպան | բաղեղի տերևների հանուկ | օշարակ | 7մգ/մլ; 100մլ ապակե շշիկ և չափիչ բաժակ | Վետպրոմ ԱԴ, Օտեց Պայսիժ փ. 26, Ռադոմիր 2400 | Բուլղարիա | Դանսոն-ԲԳ Քո. ՍՊԸ, Օտեց Պայսիժ փ. 26, Ռադոմիր 2400 | Բուլղարիա | ԱԴ | 19049 25.12.2019 |
| 4. | Ռոլենիում | ֆլուտիկազոն (ֆլուտիկազոնի պրոպիոնատ) | դեղափոշի շնչառման, | 250մկգ/դեղաչափ+50մկգ/դեղաչափ; (1) շնչառման | ԷԼՊԵՆ Ֆարմասյութիքալ ԿՕ., ԻՆՍ, Մարաթոնս պողոտա 95,Պիկերմի | Հունաստան | Դսեյ Ֆարմա Դրագ Սթոր ՍՊԸ, Օբերիո կենտրոն, | Արաբական Միացյալ Էմիրություններ | Դ | 19050 25.12.2019 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | , սալմետերոլ (սալմետերոլի քսինաֆոատ), | դեղաչափավորված | պլաստիկե սարք (60 դեղաչափ) | ատիկի 19009 | | բիզնես բայ 117929, Դուբայ | | | |
| 5. | Ռոլենիում | ֆլուտիկազոն (ֆլուտիկազոնի պրոպիոնատ), սալմետերոլ (սալմետերոլի քսինաֆոատ), | դեղափոշի շնչառման, դեղաչափավորված | 500մկգ/դեղաչափ+50մկգ/դեղաչափ; (1) շնչառման պլաստիկե սարք (60 դեղաչափ) | ԷԼՊԵՆ Ֆարմասյութիքալ ԿՕ., ԻՆՍ, Մարաթոնս պողոտա 95,Պիկերմի ատիկի 19009 | Հունաստան | Դսեյ Ֆարմա Դրագ Սթոր ՍՊԸ, Օբերիօ կենտրոն, բիզնես բայ 117929, Դուբայ | Արաբական Միացյալ Էմիրություններ | Դ | 19051 25.12.2019 |